ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի
ՀՀ-ՇՄՆ-ԴՇ-26/02 պայմանագրով 2026 թվականի ինն ամիսների ընթացքում
նախատեսված միջոցառումների կատարման մասին

1. ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Օդերևութաբանական դիտարկումներ

Հաշվետու ժամանակահատվածում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով օդերևութաբանական դիտարկումները կատարվել են հանրապետության տարածքի 25 օդերևութաբանական կայաններում՝ լրիվ ծրագրով, իսկ 24 հիդրոլոգիական դիտակետերում՝ կրճատ ծրագրով /միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան ծածկի բարձրության/, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան 3 ժամը մեկ անգամ 00 ժամից սկսած (Գրինվիչի ժամանակով), իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա:

Դիտարկումներ են իրականացվել նաև 50 ավտոմատ օդերևութաբանական կայաններում համաժամանակյա՝ յուրաքանչյուր 10 րոպեն մեկ:

Դիտարկումներն իրականացվել են օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ:

Ամեն օր կազմվել է առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում, իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին՝ հաջորդ ամսվա օդերևութաբանական պայմանների խորհրդատվական կանխատեսումը:

Յուրաքանչյուր շաբաթ կատարվել են դիտված օդերևութաբանական պայմանների՝ շաբաթական, իսկ ամսվա վերջում՝ ամսական վերլուծություններ:

Կազմվել են հաշվետու ժամանակահատվածի ընթացքում դիտված օդերևութաբանական տվյալների ամսական աղյուսակներ:

Կատարվել են օդերևութաբանական ամենօրյա տվյալների շարունակական արխիվացման աշխատանքներ:

Կայաններից ստացված տեղեկատվությունը ենթարկվել է վերլուծական ստուգման և հանձնվել մուտքագրման բաժին՝ «CLICOM» ծրագրով օդերևութաբանական տվյալների բանկ մուտքագրման նպատակով:

Ընդհանուր առմամբ 2026թվականի ինն ամիսների ընթացքում կատարվել է 54600 օդերևութաբանական դիտարկումներ:

Շահագրգիռ կազմակերպություններն ապահովվել են օդերևութաբանական ռեժիմային տվյալներով:

Հաշվետու ժամանակահատվածում տրվել է **83** նախազգուշացում օդերևութաբանական վտանգավոր երևույթների վերաբերյալ:

h/h	Երևույթի տեսակը	Չափի միավոր	անբարենպաստ երևույթի քանակը	վտանգավոր երևույթի քանակը
1.	Քամի	դեպք	170	7
2.	Մառախուղ	դեպք	79	10
3.	Ձյուն	դեպք	-	3
4.	Բուք	դեպք	-	3
5.	Անձրև	դեպք	-	4
6.	Կարկուտ	դեպք	15	26
7.	Սաստիկ շոգ	դեպք	-	5

1·2·Հելիոերկրաֆիզիկական դիտարկումներ

ա/ Օզոնոմետրիա

Օզոնոմետրիական դիտարկումներն իրականացվել են Ամբերդ բարձր լեռնային դժվարամատչելի օդերևութաբանական կայանում, Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրով՝ օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում՝ 3 - 5 անգամ:

Ամբերդ օդերևութաբանական կայանից ստացված դիտանյութերի արդյունքները սահմանված կարգով մշակվել և ուղարկվել են ՀՕԿ-ի Օզոնային և ուլտրամանուշակագույն ճառագայթման տվյալների համաշխարհային կենտրոն (WOUDC):

Օգոստոսի 24-ից առ այսօր օզոնոմետրական դիտարկումները ժամանակավորապես դադարեցվել են: Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրն ուղարկվել է Գերմանիայի Դաշնության տարածաշրջանային կենտրոն՝ պլանային ստուգաճշտման:

բ/ Ակտինոմետրիա

Ակտինոմետրական դիտարկումներն իրականացվել են 2 կայաններում՝ Երևան-ագրո, Մարտունի: Դիտարկումները կատարվել են օրվա ցերեկային ժամերին 3 ժամը մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 03.30, 06.30, 09.30, 12.30, 15.30/, գիշերային ժամերին՝ մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին/, արեգակնային կարճալիք ուղիղ, ցրված ու անդրադարձված ճառագայթման և ճառագայթային հաշվեկշռի վերաբերյալ, կատարվել է նաև գումարային երկարալիք ճառագայթման հաշվեկշռի և ազդեցության մակերևույթի ալբեդոյի հաշվարկ:

Կատարվել է ավտոմատ օդերևութաբանական կայանների գումարային ճառագայթման տվյալների շարունակական արխիվացում:

Կատարվել է Հայաստանի բոլոր մարզերի համար ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության բնութագրիչների մշակում՝ ինդեքսների տեսքով, ինչպես նաև Արեգակի ակտիվության ու գեոմագնիսական դաշտի վիճակի մասին տեղեկատվության մշակում:

Ընդհանուր առմամբ 2026թ-ի ինն ամիսների ընթացքում կատարվել է 5882 հելիոերկրաֆիզիկական դիտարկումներ:

1.3. Ագրոօդերևութաբանական դիտարկումներ

Ագրոօդերևութաբանական դիտարկումներն իրականացվել են Երևանի մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայանում և օդերևութաբանական ցանցի 38 կայաններում:

Հանրապետության պետական կառավարման մարմիններին, մարզպետարաններին, ֆերմային տնտեսություններին և տարբեր կազմակերպություններին տրվել է անհրաժեշտ տեղեկատվություն ագրոօդերևութաբանական պայմանների մասին:

Տրվել են

- տասնօրյակային, ամսական (ձմռան ամիսներին), շաբաթական և առաջին եռամսյակային ագրոօդերևութաբանական տեղեկատվություններ,
- տեղեկանք աշնանացան ցորենի ցանքի, աճի և ձմեռման պայմանների վերաբերյալ,
- տեղեկանք գյուղատնտեսական աշխատանքների ժամկետների՝
  - վաղահաս կարտոֆիլի ցանքի,
  - ջերմասեր մշակաբույսերի սածիլման վերաբերյալ,

Կատարվել են՝

- աշնանացան ցորենի կենսունակության որոշման և վնասվածության գնահատում ձմռան ցրտերից (%),
- աշնանացան ցորենի վեգետացիայի վերսկսման պահին հողի խոնավության պաշարների գնահատում ըստ գոտիների՝ փետրվարի 20-ի, մարտի 10-ի և 20-ի դրությամբ (20, 50 սմ շերտերում),
- Ֆենոլոգիական կանխատեսում՝
  - Արարատյան դաշտում ծիրանենու, դեղձենու և խաղողի վազի ծաղկման ժամկետների վերաբերյալ,
  - լեռնային շրջաններում աշնանացան ցորենի հասկակալման և մոմային հասունացման փուլերի վերաբերյալ,

Բերքատվության կանխատեսում՝

- Արարատյան դաշտում ծիրանի միջին հանրապետական,
- հացահատիկային մշակաբույսերի միջին հանրապետական (վեգետացիայի վերսկսման և ցողունակալման փուլերում),
- ագրոօդերևութաբանական տվյալների շարունակական թվայնացման և արխիվացման աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ 2026թ.-ի ինն ամիսների ընթացքում իրականացնել է 13106 ագրոօդերևութաբանական դիտարկումներ:

1.4. Ռադիոլոգիական մոնիթորինգ

Հիդրոօդերևութաբանական ցանցի 21 (Թալին կայանում դոզիմետրի անսարքության պատճառով դիտարկումներ չեն իրականացվել 07·04·2026թ· առ այսօր) կայաններում՝

ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր Գրինվիչի ժամանակով ժամը 06:00 (տեղական ժամանակով 10:00) իրականացվել են գամմա ֆոնի չափումներ:
Իրականացվել է շրջակա միջավայրի գամմա ճառագայթման դոզայի հզորության և աերոլոգիական կայանից բերված այրված թանզիֆի նմուշի ռադիոակտիվ փոշու մակերեսային խտության գումարային բետա ակտիվության ամենօրյա չափումներ:
Կատարվել է Դիլիջանի և Սևան օդերևութաբանական կայանից բերված հողի նմուշների գումարային բետա-ակտիվության չափումներ, ըստ անհրաժեշտության:
Շրջակա միջավայրի գամմա ճառագայթման դոզայի հզորության ամենօրյա արդյունքները շաբաթվա վերջում վերահաշվարկվելուց հետո РХОБ հեռագրի միջոցով, կոդավորված ձևով, ուղարկվել են Օբնինսկ:
Հաշվետու ժամանակահատվածում Աերոլոգիական կայանում ռադիոմետրի (մակնիշ՝ РКС-АТ1329) միջոցով իրականացվել են ատոմակայանի շրջակայքից՝ ՀԱԷԿ-ի 30 կմ գոտում գտնվող «Սևջուր» և «Տարոնիկ» հիդրոլոգիական դիտակետերից բերված ջրի նմուշների (4 նմուշ), ինչպես նաև Սևանա լիճ թափվող գետերից վերցված ջրի նմուշների (68 նմուշ) կոշտ մնացորդներում գումարային բետա և ալֆա ճառագայթման ռադիոակտիվության չափումներ:
Չափումների արդյունքները չեն տարբերվել ֆոնային արժեքներից և չեն գերազանցել թույլատրելի սահմանները:

Ընդհանուր առմամբ 2026թ-ի հնն ամիսների ընթացքում իրականացվել է 6800 բետա-ակտիվությամբ աղտոտվածության չափումներ /ռադիացիոն մոնիթորինգ/:

1.5. Հիդրոլոգիական դիտարկումներ

Իրականացվել են ռեժիմային հիդրոլոգիական ուսումնասիրություններ 68 գետային, 2 ջրանցքի (Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք, Արփա-Սևան ջրատար), 5 ջրամբարային (Արփիլիճ, Ախուրյան, Ապարան, Մարմարիկ, Ազատ) և 4 լճային (Սևանա լիճ) հիդրոլոգիական դիտակետերում: Սահմանված կարգով հիդրոլոգիական դիտակետերում իրականացվել են ջրի ելքի չափումներ, կատարվել են ջրի մակարդակի, ջրի և օդի ջերմաստիճանի, սառցային երևույթների դիտարկումներ:
Սևանա լճի 4 դիտակետերում կատարվել են ջրի մակարդակի, ջերմաստիճանի, սառցային երևույթների (առկայության դեպքում) ամենօրյա՝ 2 ժամկետային դիտարկումներ:
Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է Սևանա լճի ամսական և 2025 թվականի տարեկան ջրային հաշվեկշիռը և տվյալները հրապարակվել են «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:
Ամեն օր 47 գետային, 5 ջրամբարային և 4 լճային հիդրոլոգիական դիտակետերից, ինչպես նաև Արփա-Սևան ջրատար-Ծովինար և Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք-Գեղամավան դիտակետերից ստացվել է հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հիման վրա կազմվել են ամենօրյա հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև հիմնական հիդրոլոգիական տեղեկագրի տեղեկատվությունը հրապարակվել է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Կազմվել են համապատասխան ձևաչափերի տեղեկանքներ (շաբաթական և ամսական կտրվածքով) գետերում դիտված ռեժիմի, Սևանա լճի մակարդակի, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակի, ջրամբարների ջրալցվածության վերաբերյալ, շահառուներին տրամադրելու և «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կայքում և սոցիալական ցանցերում հրապարակելու համար:

Կազմվել են ջրի միջին տասնօրյակային ելքերի և ջրի միջին ամսական ելքերի կանխատեսումներ 21 հիդրոլոգիական դիտակետերի համար: Գնահատվել են թողարկված կանխատեսումների արդարացումները:

Մշտական ռեժիմով «Մերձավոր Արևելքի և Սևծովյան տարածաշրջանի երկրներում հանկարծահաս հեղեղումների կառավարում» (BSMEFFG) համակարգի միջոցով դիտարկվել է հեղեղումների առաջացման ռիսկերը:

Հաշվետու ժամանակահատվածում գետերում ջրի ելքերի զգալի մեծացման վերաբերյալ տրվել է չորս նախազգուշացում՝ մարտի 26-ին, ապրիլի 20-ին, մայիսի 4-ին և 27-ին:

Մարտի 30-ին թողարկվել և բոլոր շահառուներին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության գետերի 2026 թվականի գարնանային վարարումների տարրերի կանխատեսում» տեղեկագիրը, որում ներառված են 83 գետային դիտակետերի գարնանային վարարումների հոսքի ծավալների, 68 դիտակետերի առավելագույն ելքերի, 63 դիտակետերի վեգետացիոն ժամանակաշրջանի հոսքի ծավալների, ինչպես նաև 10 ջրամբարներ և Սևանա լիճ գարնանային վարարումների ընթացքում գետերով մուտք գործող ջրի ծավալների, 2 ջրամբարներ (Ախուրյան, Ապարան) ու Սևանա լիճ գետերով մուտք գործող ջրի վեգետացիոն ժամանակաշրջանի հոսքի ծավալների կանխատեսումները, ինչպես նաև Սևանա լճի մակարդակի փոփոխության կանխատեսումները՝ գարնանային վարարումների ժամանակահատվածում և տարեկան կտրվածքով, և դիտարկվող 5 ջրամբարների տարեկան առավելագույն լցվածությունների կանխատեսումները: Տեղեկագրում ներառված է նաև գարնանային վարարումների բնութագրերը ձևավորող հիդրոօդերևութաբանական պայմանների նկարագիրը: Տեղեկագիրը հրապարակվել է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Շարունակվել են նախատեսված աշխատանքները հիմնական հիդրոլոգիական բնութագրիչների որոշման և հաշվարկման ուղղությամբ: Կատարվել են հիդրոլոգիական տվյալների թվայնացման աշխատանքներ:

2026 թվականի հունվարի 16-ին Դեբեդի գետավազանի հիդրոլոգիական կայանի պետը Դեբեդ գետի հունի վիճակը գնահատելու նպատակով գործուղվել է Շնող բնակավայրից մինչև Քարկոփ բնակավայր:

Ամենամյա դաշտային հիդրոլոգիական դիտարկման նյութերի հանձնման և կազմակերպչական այլ հարցերի քննարկման նպատակով 2026 թվականի մարտի 4-ին Հիդրոլոգիայի ծառայության գետավազանային կայանների պետերը մեկ օրով գործուղվել են քաղաք Երևան:

2026 թվականի գարնանային վարարումների հետ կապված աշխատանքները համակարգելու, ինչպես նաև հիդրոլոգիական դիտակետերում նիվելիրացման և ստուգիչ

ջրաչափական աշխատանքներ կատարելու նպատակով գետավազանային հիդրոլոգիական կայանների պետերը և հիդրոմետրիայի բաժնի աշխատակիցները ապրիլի 9-ից 23-ն ընկած ժամանակահատվածում գործուղվել են իրենց կայանների և բաժնի ենթակայությամբ գործող հիդրոլոգիական դիտակետեր:

Գարնանային վարարումների ընթացքում հիդրոլոգիական դիտացանցում աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև դիտակետեր այցելությունների արդյունքների ամփոփման նպատակով 2026 թվականի ապրիլի 28-ին անց է կացվել «Գարնանային վարարումների հետ կապված հիդրոլոգիական կայանների պետերի խորհրդակցությունը», որի մասնակցելու համար Հիդրոլոգիայի ծառայության գետավազանների հիդրոլոգիական կայանների պետերիը մեկ օրով գործուղվել են Երևան:

Գետերում ջրի մակարդակի և ելքի կախվածության կորերի ստուգման նպատակով մի շարք հիդրոլոգիական դիտակետերում իրականացվել են ստուգիչ ջրաչափական աշխատանքներ:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետում ՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ և Թուրքիայի Հանրապետության մասնագետների հետ համատեղ մեր մասնագետները հաշվետու ժամանակահատվածում 9 անգամ իրականացվել են համատեղ ջրաչափական աշխատանքներ:

2026 թվականի հունիսի 30-ին Ջրային կոմիտեի և «Արփա-Սևան» ԲԲԸ մասնագետների հետ համատեղ ջրաչափական աշխատանքներ են իրականացվել Արփա-Սևան ջրատարի Ծովինար հիդրոլոգիական դիտակետում:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև ԲՈՒՀ-երից ստացված գրությունների հիման վրա պատրաստվել և տրամադրվել է անհրաժեշտ հիդրոլոգիական տեղեկատվություն, այդ թվում հաշվարկվել են հանրապետության գետերի տարբեր գետահատածքների բնապահպանական թողքի ամսական արժեքներ:

2026 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.63 մ, որը նախորդ տարվա՝ 2025 թվականի, նույն օրվա մակարդակի՝ 1900.41 մ, համեմատ բարձր է 22 սմ-ով, իսկ 2026 թվականի հունվարի 1-ի մակարդակի՝ 1900.22 մ, համեմատ բարձր է 41 սմ-ով:

Ջրամբարների ջրալցվածությունը 2026 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է. Արփիլիճ ջրամբարում՝ 69.70 մլն մ^3, Ախուրյանի ջրամբարում՝ 427.23 մլն մ^3, Ապարանի ջրամբարում՝ 34.70 մլն մ^3, Մարմարիկի ջրամբարում՝ 1.98 մլն մ^3, Ազատի ջրամբարում՝ 28.86 մլն մ^3:

2026 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ դիտարկվող 5 ջրամբարներում ջրի ծավալների գումարային մեծությունը կազմել է 562.47 մլն.խոր.մ, որը 2025 թվականի նույն օրվա մեծության՝ 183.99 մլն.խոր.մ, համեմատ 378.48 մլն.խոր.մ-ով, ավել է:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակը 2026 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ կազմել է 175.456 մլն.խոր.մ, որը 71.215 մլն.խոր.մ-ով ավել է 2025 թվականի նույն ժամանակահատվածում Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակից:

2026 թվականի հուլիսի 2-ից Սևանա լճից սկսվել է իրականացվել ոռոգման նպատակով ջրառ և շարունակվել է մինչև 2026 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ և այդ

ժամանակահատվածում լճից բացթողնված ջրի գումարային ծավալը կազմել է 75.306 մլն.խոր.մ, որը 105.659 մլն.խոր.մ-ով պակաս է 2025 թվականին լճից բացթողնված ջրի գումարային ծավալից:

Ընդհանուր առմամբ 2026 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացվել են 49938 հատ հիդրոլոգիական դիտարկումներ:

1.6. Ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացում

2026 թվականի ինն ամսում ռադիոլոկացիոն մոնիթորինգի ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կատարվել են ՄՌԼ-5 ռադիոլոկատորների դետալների, ռադիոլոկացիոն համակարգերի անխափան աշխատանքի ապահովման նպատակով դիզելային և ավտոնոմ սնուցման ագրեգատների ապակոնսերվացման, հանգույցների տեխնիկական վիճակի նախնական ստուգման, ապակոնսերվացման և աշխատանքային վիճակի բերման աշխատանքներ,
- վերագործարկվել են Արագածոտնի և Լոռու ռադիոլոկացիոն կայանները,
- պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման վերաբերյալ ՆԳՆ աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման վարչության ռեեստրի բաժնին ներկայացվել է հաշվետվություն,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 5-ի №255-Ա որոշման հավելվածով սահմանված գույքը տրամադրվել է համապատասխան համայնքներին:
- ՆԳՆ աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչության ռեեստրի բաժնում կատարվել են վերը նշված գույքի՝ որպես արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման փոփոխության աշխատանքներ:
- 2026 թվականի ինն ամսում ըստ ռադիոլոկացիոն տվյալների գրանցվել են կարկտահարության դեպքեր հետևյալ բնակավայրերում.

Արագածոտնի մարզի Ափնագյուղ, Վարդենուտ, Դաշտադեմ, Լուսակն, Աշնակ, Ներքին Բազմաբերդ, Ապարանի տարածաշրջան (2), Թալինի տարածաշրջան, Արագած լեռան հյուսիսարևմտյան լանջերին,

Կոտայքի մարզի Թեղնիկ, Հրազդան

Արմավիրի մարզի Քարակերտ, Դալարիկ,

Արարատի մարզի Նարեկ գյուղից հյուսիս,

Վայոց Ձորի մարզ Աղնջաձոր

Լոռու մարզի Ստեփանավան(3), Լոռի Բերդ, Ամրակից (2), Լեջան, Բովաձոր(2), Ագարակ, Կաթնաջուր (2), Գեղասար, Շիրակամուտ, Գոգարան, Սպիտակ (2), Մեծ Պարնի (2), Թեղուտ, Նեղոց, Շնող, Մեծ Այրում, Ախթալա, Տաշիր (4), Սարատովկա (3), Մեդովկա (2), Սվերդլով (2), Արմանիս (3), Գետավան, Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Գարգառ,

ՈՒռուտ, Օձուն(2), Այգեհատ, Քարինջ, Մարց, Ջրաշեն, Լեռմոնտովո, Ֆիոլետովո, Պուշկինի լեռնանցք

Տավուշի մարզի Բերդ համայնքից 12 կմ հարավ արևմուտք, Ոսկեպար (2), Կիրանց, Բերքաբեր, Սարիգյուղ, Բաղանիս, Ջուջևան, Դիլիջան

Շիրակի մարզի Արթիկ(2), Մեղրաշատ, Ողջի, Հայկավան, Մարմաշեն, Վահրամաբերդ, Գյումրի (2), Մայիսյան (2), Հացիկ, Քեթի, Ցողամարգ, Թորոսգյուղ, Բայանդուր, Լուսակերտ, Ազատան, Մարալիկ, Ձորակապ, Լանջիկ, Բագրավան, Նոր Արթիկ, Սառնաղբյուր, Ձիթհանքով, Հայկաձոր, Սարակապ, Քարաբերդ, Պեմզաշեն, Կապս, Մեղրաշատ, Լուսաղբյուր

Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջան (2), Շորժա,Գեղհովիտ

Կարկուտ տեղացած օրերի քանակը կազմել է 40 օր:

Ընդհանուր առմամբ 2026 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացվել են 15028 հատ ռադիոլոկացիոն դիտարկում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2.1. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի իրականացում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգը (ջրի նմուշառում, դաշտային հետազոտություններ, ֆիզիկաքիմիական և հիդրոկենսաբանական անալիզներ, որակի գնահատում) իրականացվել է հանրապետության 6 ՋԿՏ-ում ընդգրկված ջրային ռեսուրսների (գետեր, ջրամբարներ, ջրատարներ, Սևանա լիճ) 129 դիտակետում: Ջրի նմուշներում դիտարկվել են ջրի որակի բնութագրական 45 ֆիզիկաքիմիական՝ հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ:

Ընդհանուր առմամբ որոշվել է 46000 ցուցանիշ:

2.2. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության 10 բնակավայրում օդի նմուշառման երկու եղանակով՝ ակտիվ (այդ թվում՝ ավտոմատ) և պասիվ: Մթնոլորտային օդում ուսումնասիրվել են ազոտի և ծծմբի երկօքսիդների, փոշու, փոշում պարունակող մետաղների ու գետնամերձ օզոնի պարունակությունները:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ և Ծաղկաձոր քաղաքներում մթնոլորտային օդի որակի դիտարկումներն իրականացվել են 15 ստացիոնար դիտակայանում՝ ակտիվ նմուշառման եղանակով: Պասիվ եղանակով նմուշառումներ իրականացվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան և Ծաղկաձոր քաղաքների 192 դիտակետում: Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն վարչական շրջաններում տեղադրված 2 ավտոմատ դիտակայաններում իրականացվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, գետնամերձ օզոնի, ինչպես նաև կախված մասնիկների՝ PM2.5 և PM10, իրական ժամանակում չափումներ:

2026 թվականի առաջին կիսամյակում **ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 29500 ցուցանիշ:**

2.3. Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում **հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում միջոցառման շրջանակում որոշվել է 8500 ցուցանիշ:**

2.4. Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի իրականացում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի Ամբերդի դիտակայանում իրականացվել է **մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների մոնիթորինգ և որոշվել 7155 ցուցանիշ:**

2.5. Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում

«Արաքս գետի ջրի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի ծրագրի» շրջանակում Արաքս գետի հայ-իրանական սահմանային հատվածում 2026 թականի ինն ամիսների ընթացքում իրականացվել է **ջրի և հատակային նստվածքների մոնիթորինգ և որոշվել 1200 ցուցանիշ:**

2.6. Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող և ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների մոնիթորինգ ինն ամիսների ընթացքում իրականացվել է 225 ցուցանիշ:

2.7. Շրջակա միջավայրի նախարարության կայքի սպասարկում, «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի սպասարկում, բնապահպանական տեղեկատվության հավաքագրում, մշակում, վերլուծում, էկոպորտալում ինդիկատորների գնահատում, մշակում, թարմացում, պորտալի սպասարկում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում ապահովվել է շրջակա միջավայրի նախարարության կայքերի (հին՝ env.am և գործող՝ environment.gov.am) սպասարկման աշխատանքները: Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում տեղադրվել են լուրեր, հայտարարություններ, բնապահպանական փորձաքննության նախագծեր, փորձաքննության եզրակացություններ, լիցենզիաների, թույլտվությունների, պայմանագրերեի վերաբերյալ տեղեկատվություններ, նախարարության և համակարգի կառույցների աշխատակազմերի փոփոխություններ՝ ըստ ստացված հրամանների, նախարարության թափուր հաստիքների պարբերական թարմացումներ, բնապահպանական ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի ցանկերի թարմացումներ: Բացվել են նոր բաժիններ, տեղադրվել համապատասխան տեղեկատվությունը, կատարվել է եռալեզու թարգմանություն:

ՇՄՆ կայքի համապատասխան էջերի թարմացումները և նյութերի եռալեզու թարգմանությունները կատարվել են ՀՀ Բնապահպանության նախարարի 02.10.2017թ. թիվ 338-Ա հրամանով հաստատված կարգի համաձայն:

Սպասարկվել է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի meteomonitoring.am կայքը, կայքում ավելացվել են մի շարք էջեր, բաժիններ, ենթաբաժիններ: Ամենօրյա ռեժիմով տեղադրվել են եղանակային

կանխատեսումներ: Ջրամբարների լցվածության, Սևանա լճի մակարդակի, ջրի որակի, մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունները հրապարակվել են կայքի համապատասխան բաժիններում: Բարելավվել են կայքի մի շարք էջեր, կատարվել է դիզայնի փոփոխություն: Իրականացվել է կայքում տեղադրված նյութերի և մենյուների եռալեզու թարգմանություն:

Սպասարկվել են «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի սոցիալական՝ ֆեյսբուք–յան, ինստագրամյան, տելեգրամյան և լինքինդինյան էջերը: Ավելացել է հետևորդների թիվը սոցիալական ցանցերում:

Սպասարկվել է Հայաստանի էկոպորտալի կայքը՝ ecoportal.am: Ամբողջությամբ վերախմբագրել ու թարմացվել են C1, C2, C3, C4, C11, C12, D1 ինդիկատորները:

Օդի որակի մոնիթորինգի տվյալների համար ստեղծված բազայում պարբերաբար ավելացվել են բոլոր աղտոտիչների ընթացիկ տվյալները:

Իրականացվել է մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային օդի մոնիթորինգի տվյալների ամփոփում, գնահատում և վերլուծություն, բազաների թարմացում, տվյալների սահմանված կարգով տրամադրում և հրապարակում: Ընթացիկ ժամանակահատվածում շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքներն ամփոփվել են ամսական տեղեկանքներում: 2026 թվականի իննամսյակում պատրաստվել, հրապարակվել և համապատասխան գերատեսչությունների են տրամադրվել թվով 16՝ հետևյալ հիմնական տեղեկագրերը, ամփոփագրերը և քարտեզները.

1. ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին տարեգիրք 2025թ.
2. ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին ամփոփագիր 2025թ.
3. ՀՀ տարածքում մակերևութային ջրերի որակի մասին ամփոփագիր 2025թ.
4. ՀՀ տարածքում ստորերկրյա ջրերի ազգային (հենակետային) ցանցի մոնիթորինգի
5. ՀՀ տարածքում հողային ծածկույթի ուսումնասիրության մասին ամփոփագիր 2025թ.
6. ՀՀ օդերևութաբանական պայմանները 2025թ.
7. ՀՀ գետերի գարնանային վարարումների տարրերի կանխատեսման մասին
8. տեղեկագիր 2026թ.
9. ՀՀ հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ 2025թ. 4-րդ եռամսյակի տեղեկագիր, 2026թ. 1-ին եռամսյակի տեղեկագիր, 2026թ. 2-րդ եռամսյակի տեղեկագիր
10. ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքների մակերևութային ջրերի որակի դասերի քարտեզներ 2025թ.

2.8. «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրհուս կենտրոնի) սպասարկում

2026 թվականի իննամիսների ընթացքում Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի (Երևանի Օրհուս կենտրոն) կողմից, հիմք ընդունելով Օրհուսի կոնվենցիայի դրույթները, իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- քննարկումների կազմակերպում՝ կազմակերպվել է առցանց քննարկում «Օդի աղտոտվածություն» թեմայով, բնապահպանության ոլորտում գործող ՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ,
- աջակցություն և մասնակցություն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի հանրային քննարկմանը, առաջարկների ներկայացում,
- հասարակությանը տեղեկատվության տրամադրում, լուսաբանում և տարածում,
- գրադարանի և ֆիլմադարանի այցելուների սպասարկում, համագործակցություն բնապահպանական ոլորտի ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ,

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Անտառների, Ջրի և Օդերևութաբանության համաշխարհային օրերին:
Տեղի է ունեցել Օրհուս կենտրոնի խորհրդի տարվա առաջին նիստը, քննարկվել է կենտրոնի աշխատանքային ծրագիրը:

2.9. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի իրականացում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգն իրականացվել է 6 ՋԿՏ-ում ընդգրկված 114 ստորերկրյա ջրաղբյուրներում, **որտեղ որոշվել է 13332 ցուցանիշ**

2·10.Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի իրականացում

2026 թվականի ինն ամիսների ընթացքում ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի միջոցառման շրջանակներում որոշվել է 2200 ցուցանիշ:

2.11. Թափոնների հաշվառում, դասակարգում և վերլուծություն

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցության շրջանակներում, թափոնների և դրանց օգտագործման ու վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների բանկը համալրելու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են թափոնների **օգտահանման, վնասազերծման 10 տեխնոլոգիա և երկրորդային հումքի վերամշակման 5 մեթոդ:**
Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցության շրջանակներում, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են թափոնների **գոյացման, վերամշակման ու օգտահանման 17 գոյացնող օբյեկտներ:** Օբյեկտների ընտրության չափորոշիչներն են՝ օբյեկտը գոյացնում է թափոններ կամ օբյեկտը վերամշակում/օգտահանում է թափոններ կամ վերոնշյալ երկու չափորոշիչների

համակցությունը: Ուսումնասիրության ընթացքում հավաքվել է հետևյալ տեղեկատվությունը՝ օբյեկտի գործունեության տեսակը, գտնվելու վայրը, թափոնների անվանացանկը, գոյացման ծավալները, որակական և քանակական բնութագրերը, տեղեկություններ՝ թափոնների գործածության և դրանց գոյացման ծավալների ու վտանգավորության աստիճանի նվազեցման վերաբերյալ:

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքների աջակցության շրջանակներում, թափոնների հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնասիրություն **թափոնների հեռացման 3 վայրում**: Մասնավորապես ուսումնասիրվել են **Կոտայքի մարզի Ջրվեժ խոշորացված համայնքի, Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի** գործող աղբավայրերը: Աղբավայրի ուսումնասիրության ժամանակ հետազոտվում են մի շարք գործոններ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմել ոչ միայն տվյալ աղբավայրում տեղադրվող թափոնների ծավալի և տեսակի մասին, այլև դրանց տեղափոխման և տեղադրման պայմանների, ինչպես նաև դրանցից բխող հնարավոր ռիսկերի մասին: Վերոնշյալ տեղեկատվությունը կարող է ստեղծել հենք որոշում կայացնողների համար կանխարգելելու՝ կամ նվազագույնի հասցնելու վերոնշյալ թափոնների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Ուսումնասիրման ժամանակ հավաքվում են այնպիսի տվյալներ, ինչպիսիք են՝ աղբավայր տեղադրվող թափոնների քանակը, այն համայնքների ցանկը, որոնցից գոյացող թափոնները տեղադրվում են տվյալ աղբավայրում, բաց այրման օջախների կամ հետքերի առկայությունը, բաց այրման հաճախականությունը, ուսումնասիրովող աղբավայրի կարգավիճակը, աշխարագրական դիրքը, աղբավայրի մակերեսը, ցանկապատի, պահակատան, ջրամատակարարման և հոսանքի առկայությունը, տվյալ աղբավայրում թափոններ տեղադրող օպերատորի մասին տեղեկատվություն, ինչպես նաև այն բնակչության թվի մասին, որը գոյացնում է աղբավայր տեղափոխվող թափոնները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրման աշխատանքները, մասնավորապես՝ «Սնդիկից կամ սնդիկի միացություններից բաղկացած, դրանք պարունակող, կամ դրանցով աղտոտված թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման տեխնիկական ուղեցույց»-ի մշակումը:

Կարծիքներ են ներկայացվել մի շարք նախագծերի նախնական գնահատման հայտերում և ՇՄԱԳ հաշվետվություններում թափոնների ենթաբաժնի վերաբերյալ:

3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2026թ-ի ինն ամիսների ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ Վանաձորի, Սյունիքի, Կապանի, Հրազդանի անտառտնտեսություն մասնաճյուղերում և հարակից տարածքներում անտառների ազգային գույքագրման և մոնիթորինգի իրականացման նպատակով տեղադրվել են 251 մշտական փորձահարապարակներ, որոնց արդյունքները ներբեռնվել են տվյալների շտեմարան հետագա վերլուծությունների համար:

Իրականացվել է անուղղակի մոնիթորինգ՝ հեռահար զոնդավորման միջոցով՝ անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքներում (ընդգրկվածության աստիճանը 45 տոկոս):

Կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացում

Կենսաբազմազանության մոնիթորինգ է իրականացվել «Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, «Զանգեզուր» կենսոլորտային համալիրում, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում, «Արփա» պահպանվող լանդշաֆտ)-ում և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2 անտառտնտեսություն մասնաճյուղում՝ «Վայոց ձորի» և «Ստեփանավանի»: Հավաքագրվել են սնկերի, կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ տվյալներ: Տվյալների քանակը տարեվերջյան վալիդացումից հետո հնարավոր է փոփոխվի:

Առկա է՝

- Կարմիր գրքում առկա 35 տեսակի վերաբերյալ՝ 68 դիտարկում, IUCN ցանկում առկա 162 տեսակի վերաբերյալ՝ 429 գրանցում, ռելիկտային՝ 0 և դոմինանտ տեսակի վերաբերյալ՝ 23 տվյալ
- 9 տարածքում («Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ, «Արփա» պահպանվող լանդշաֆտ) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2 անտառտնտեսություն մասնաճյուղում («Վայոց ձորի» և «Ստեփանավանի») իրականացվել է ինդիկատոր տեսակների մոնիթորինգ (40 ինդիկատոր տեսակի վերաբերյալ՝ 145 գրանցում)
- Տվյալները SQL հիմքով են
- Քարտեզագրված և IUCN կատեգորիաներով վերագնահատված սնկերի 20 կարմիրգրքյան տեսակներ
- ինդիկատոր տեսակների վերջնական ցանկ
- բազա Excel և KML ձևաչափով

Ընդհանուր առմամբ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում իրականացվելիք միջոցառումները իրականացվել են ըստ պայմանագրի սահմանված չափով և որակով: Մեխանիկական և ավտոմատ օդերևութաբանական կայանների միջոցով,համալիր դիտարկումների անընդհատություն՝օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ 100 տոկոս: Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակները որոշվել են , համաձայն Ստոկհոլմի Կոնվենցիայի 75 տոկոսով: Ցուցանիշների համապատասխանության տեսակարար կշիռը (արդյունավետությունը) ծրագրով հաստատված մոնիթորինգային ցուցանիշներին կազմում է 100 տոկոս: Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության ստանդարտներին

համապատասխանության աստիճանը,կանխատեսումների արդարացվածության տոկոսը կազմում է 85 տոկոս: Վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրությունը հաշվետու ժամանակաշրջանի համար սահմանվածի չափով՝ 75 տոկոս: Անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների ընդգրկվածության աստիճանը(անուղղակի մոնիթորինգ՝ հեռահար զոնդավորման միջոցով) 45 տոկոս:

Հաշվետու ժամանակաշրջանում աերոլոգիական դիտարկումներ և ռադիոզոնդարկում չի իրականացվել գազագեներատորի անսարքության պատճառով:

Գիտատեխնիկական խորհրդի քննարկման են ներկայացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր-2027» մրցույթի շրջանակներում ներկայացվող 7 գիտական Նախագծեր, որոնք բոլորն էլ Խորդրդի կողմից հավանության են արժանացել և դրական եզրակացությամբ երաշխավորվել մրցույթին ներկայացվելուն: “Հայհիդրոմետ” ՊՈԱԿ-ի կողմից «Նպատակային ծրագրեր-2027» մրցույթին ներկայացվել են 6 գիտական հայտեր:
Հաշվետու ժամանակահատվածում Խորհրդին է ներկայացվել 5 թեկնածուական ատենախոսության սեղմագիր: Երկու թեկնածուական ատենախոսության վերաբերյալ տրվել է պաշտոնական ընդդիմախոսների կարծիքներ:
«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 6-ի №1367-Ա հրամանի համաձայն՝ Միջազգային Գիտատեղեկատվական Շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակումների համար պարգևատրում է տրամադրվել 3 անգամ:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրեն Լ.Ազիզյան

"____ " _____ 2026թ.